

ԻՆՆԵՐՈՐԻ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 րուբլ, կէս տարեկանը 6 րուբլ:
Եռամսեային համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրքուսումնասիրական խմբակը:

Օտարաբարբաղները գինում են ուղղակի
Тифлис. Редакция „Муса“

ՄԱՍԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Կացի կիրակի և տոն օրերից):

Հայտարարութիւնը ընդունւում է ամէն լի գոյով:

Հայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԱԿՈՒԹԻՒՆ

Թիֆլիսի ստորին դասը.— Եւրոպայի տեսու-
թիւնը, Նամակ Մոսկովայից, Նամակ Արմանս-
կից, Նամակ խմբագրին:— Արտաքին տեսու-
թիւնը, Միթլինգի նպատակով, Քիւրքիսի,
Գնացանների ազդարարութիւնը, Արտաքին տեսու-
թիւնը, Նաւագիւններ, Յայտարարութիւններ,
— Բանասիրական, խնամք:

ԹԻՖԼԻՍԻ ՍՏՈՐԻՆ ԴԱՍԸ

Բաւական չէ զանգատել
պէտք է և միջոց գտնել այն բա-
նի դէմ առաջն առնելու, որի մա-
սին մարդը զանգատուում է:

Այժմ թէ մասնաւոր խօսակ-
ցութեան մէջ և թէ տեղական
լրագրութեան մէջ լսուում են զան-
գատներ, թէ Թիֆլիսի հայ և
փրաց ազգաբնակչութեան ստորին
դասակարգը անբարոյական է դար-
ձել, այլ ևս բարք ու վարքերի ա-
ռաջիկայ մարդութիւնը չունի: Ան-
ցեալ օրվայ «Кавказ» լրագիրը,
օրինակ, զանգատուում էր թէ
մեր բաղադր արուեստագործները և
զործակատարները յարձակւում
են փողոցում անցնող կանանց և
աղջկաների վրա, և անխնայ կեր-
պով վարվում են նրանց հետ:
Որոշ լրագիրը խոստովանում է
որ առաջիկայ ժամանակներում հայ
և փրացի արուեստագործները և
մշակները շատ օրինաւոր կերպով

էին պահում իրանց, մեծ յարգան-
քով էին վերաբերվում դէպի կա-
նանց սեռը, առհասարակ: Լրա-
գիրը չէ բացատրում այդ երեւոյ-
թի պատճառը, միայն որպէս մի-
ջոց մեր անբարոյականացած ստո-
րին դասի բարք ու վարքերի դէմ
«Кавказ» լրագրի յօդուածագիրը
առաջարկում է խիստ պօղեցիական
միջոցներ:

Բայց առաջ, երբ մեր բաղա-
դրում տիրում էր նահապետական
բարք ու վարքը, միթէ պօղեցիա-
կան խիստ միջոցներով էր պահ-
պանվում կարգը փողոցներում:

Ի՞նչ ենք տուել մեր հասարա-
կութեան ստորին դասակարգին,
որ ի՞նչ պահանջներ նրանից...

Այլ ճշմարիտ, առաջ տիրում
էր մեր ժողովրդի մէջ խիստ կը-
րծական զգացմունք և մեր հա-
սարակութեան ստորին դասա-
կարգը գտնվում էր իր հին նա-
հապետական աւանդութիւնների
ներգործութեան տակ: Այդ կրօ-
նական զգացմունքն էր ու այդ
աւանդութիւններն էին, որոնք
բարոյականացնում էին ժողովուր-
դը և զնայում էին ու սանձա-
րում էին նրան: Այժմ նա մո-
ռացել թողել է հինը, իսկ նորը,
այսինքն ժամանակակից, բաղա-

դակիր թ որ և է ձևեր, որոնք
յատուկ են եւրոպացի ամենալի-
նին բանւորներին, դեռ չէ ընդու-
նել:

Այլ որտեղեք մեր ժողովուրդը
կարող է այժմ աւելի բարոյական
դառնալ: Ի՞նչ բաղադրակութեան
միջոցներ ենք տալիս մենք մեր
բաղադրային ազգաբնակչութեան
ստորին դասին:

Եկեղեցում ժողովուրդը չէ լը-
սում բարոյական քարոզներ, դրան
անընդունակ են մեր տղէտ հո-
գեւորականները: Կարոցները սա-
կաւածիւ են և իրանց ուղղու-
թեամբ ու ուսման ընթացքով,
զուրկ լինելով արհեստագիտական
տարրից, անյարմար են չքաւոր,
աշխատող, բանւոր դասակարգի
զաւակների համար: Բնականաւոր
կրթիչ հիմնարկութիւններ, լա-
րաներ, կիրակնօրեայ դպրոցներ,
հրապարակական դասախօսու-
թիւններ չը կան մեզ մօտ...

Ուրեմն որտեղ կրթիչի ժողո-
վուրդը, որտեղ սովորի լաւ բարք
ու վարքը, ինչ միջոցով ազատի
ք է ֆից, անգործութիւնից, ան-
վայել բարք ու վարքերից, արեւ-
ցողութիւնից և այլն...

Իսկ ընդհակառակն, շատ բան
նուստնում է մեր ժողովրդի բարո-

յականութեան փչացներուն: Մեր
ժողովրդին մատչելի են միայն գի-
նեսները, ցիրկը և զանազան
պանօրամաններ, զաղտնի պատկեր-
ներով և ուրիշ այդ տեսակ ան-
բարոյականացնող հասարակաց հիմ-
նարկութիւններ:

Ուրիշ կողմից մեր կրօնները,
ինչպէս արուեստագործների և գոր-
ծակատարների կրօնները, ոչինչ
չեն անում այն դասակարգերի
մոտաւոր զարգացման և բաղադրա-
կրթութեան համար, որոնց հա-
մար նրանք հիմնվել են:

Այդտեղ էլ տիրապետում է
քէֆը, ուտել խմելը և թղթա-
խաղը, աւելի ոչինչ:

Այժմ մեր հոգեւորականները
անընդունակ են մի բան անել
ամբողջի մոտաւոր և բարոյական
զարգացման համար, զոնէ մենք
աշխարհականներս մտածենք հաս-
տատ հիմքերի վրա հիմնել ժողո-
վրդի համար կիրակնօրեայ դպ-
րոցներ, լաւարաններ և հրապարա-
կական դասախօսութիւններ:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՍՏԱԿ ՄՈՍԿՎԱՅԻՑ

մայիսի 1-ին

Էարդալով Վերդուի 23 համարը, առանձին
իմ ուղարկութիւնը դրանց մի նամակ Մոսկովա-

— Միթէ բոլորին կոտորեցին, հարցրեցիս, զու-
նաթափվելով:

— Եթէ շատեմ բոլորին, դարձեալ պէտք է ասել,
որ մարդ չը մնաց: Ի՞նչ եղան, ևս ինչպէս էլ չը
զիտեմ: Աստուած ո՞ր մի հայ քրիստոնեայի թող
չը տայ այն պատուհանը, ինչ որ հասաւ Օ... գիւ-
ղին: Այդ մեր մեղքերն էր: Կարծես, Սողոմ և
Գոմորի նման երկրքից կրակ ու ծոված թափվե-
ցաւ և ամեն ինչ լափեց: Ով որ աղատվեցաւ կը-
րակից, քրդերը կամ գերի տարան կամ կոտորե-
ցին: Այդ բոլորը պատահեցաւ մէկ զինքովայ մէջ,
Առաւօտեան ամբողջ զիւրը նմանում էր մի հան-
գած խարոյկի: Կորան իմ ապօրինիները, կորան...
էլ յոյս չը կայ մի բան ստանալու... Թո՛ւմա էֆէն-
դին, — Աստուած թող հոգին լուսաւորէ, — Խօսա-
ցաւ, որ կը հաւաքէ իմ ապօրինիները, բայց նա
էլ ձեր չարը տարաւ... Այսպէս մնացի աղքատ
և տնայնի, տնտնում էք, ինչ վիճակի մէջ եմ ես...
և նա ցոյց տուց իր բրբրված հայուստը:

Արտասուք սկսեց թափվել խեղճ քահանայի
աչքերից և դառն կերպով հեկեկում էր նա: Ար-
դեօք նա յիշեց իր հարս Զուլօթին և նրա հրեշտակի
նման կրկնակներն, որոնք նոյնպէս չը կային զադ-
թականների մէջ, Արդեօք նա յիշեց իր փեսայ
տիրացու Սիմօնին և նրա կնոջը, որ իր հարազատ
աղջիկն էր, որոնք նոյնպէս անհետացել էին ընդ-
հանուր խռովութեան մէջ: Արդեօք ժողովրդի
ցաւն էր տանջում քահանային, որի հովիւն էր ին-
քը, որի կրօնաւոր այնպէս սառնասրտութեամբ
նկարագրեց նա: Դրանցից և ոչ մէկը չէր տէր
հօր արտասուքի պատճառը: Նա յիշեց միայն իր

ԻՆՆԵՐՈՐ

ԱՐԱՄԱՆԻՆԻ ԱՆՔԻՆՈՒ ՌՈՒՄ-ԹՈՒՐԱՅԻՆ
ՊԱՏԵՐԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՈՒ

— Երբ Կոնստանդնուպոլիսի մի քանի օրեր
իմ արդարեւ զոհ եղաւ:

Նախաճաշիկը վերջացել էր և մի քանի շէշ գի-
նի դատարկվել էր, երբ յայտնվեցաւ քահանան:
Վարդանին խիստ ծանր էր թուում միտանալով
հանդիպել այդ մարդուն, որ Օ... գիւղում աշխարհ
անախարհութիւններ և այլքան հոգեւոր էր պատճա-
նել թէ իրան և թէ իր բարեկամ պ: Սարմանին
բայց հանգամանքները կամայի հաշտեցնում են
մարդուն հին թշնամու հետ: Քահանայի ոգորմնի
զրուիւնը, նուազած կերպարանքը, մայրված և
քրքրված հագուստը, որ աւելի նմանեցնում էին
նրան մի մարդկանի, քան թէ Աստուծոյ տաճա-
րի սպասաւորի, — խնդ մարդու այդ բոլոր թը-
շնաւորութիւնները մոռանալ տուեցին Վարդանին
հին ատելութիւնը: Բացի դրանից, այդ մարդու
բերանից պիտի լսէր Վարդանը տեղեկութիւններ
այն ընտանիքի մասին, որի վիճակը իրան սաստիկ
հետաքրքրում էր:

— Ձեզ Գոլֆանէս հայր սուրբը ուղարկեց, հար-
ցրեց Վարդանը քահանայից, խնդրելով նստել:

— Այո, Գոլֆանէս հայր սուրբը... պատասխա-
նեց նա և տեղաւորվեցաւ փոքրիկ սեղանի մօտ,
որի վրա դեռ մնացել էր մի շէշ գինի:
Վարդանը լցրեց բաժակը և տուեց քահանային,
որը օրհնելով, իսկոյն խմեց: Ողբից ըմպելին
կարծես, կազդուրիչ ցօղ լինէր, որ թափվեցաւ
տօթից թառամած խոտորոյսերի վրա: Քահանայի
անշարժ դէմքը փոքր ինչ դուրսբացաւ: Մէկը
Մանսուրը նկատելով այդ, հարցրեց.

— Կը կամենայիք մի բան ուտել:
— Երեկվանից ոչինչ չեմ կերել, պատասխանեց
քահանան այնպիսի մի ուղորմելի ձայնով, որ չէր
կարելի չը խղճալ:
Նա ձայն տուեց պատուին նախաճաշիկ բերել
տէրութիւն համար:

Վարդանը զօրաբանում էր խնդին սկսել հար-
ցուփորձը: Նրա գրուիւնը նմանում էր այն ան-
բախտին, որի բացակայութեան ժամանակ, զո-
ղերը մտան տունը, կողոպտեցին և տարան բոլո-
րը, ինչ որ ունէր: Վերադառնալով տուն, զրո-
նում է նրան մերկ ու դատարկ: Բայց մի տեղում
նա թաղցրել էր իր գանձը, դեռ յոյս ունի, որ
չարագործների ձեռքը այնտեղ հասած չի լինի:
Մօտենում է խորհրդաւոր պահարանին, և սիրտը
զողողալով կանգնում է նրա առջև, բայց չէ հա-
մարձակվում բաց անել, չէ համարձակվում նայել:
Նախապէս պաշարում է նրան մի կանխապաշար սոս-
կում, մտածում է. — Ինչ կը լինի իր դրութիւնը,
եթէ քահանանը դատարկ կը գտնէ, նա իսկ կը
զրկվի իր վերջին յոյսից, իր միակ մխիթարութիւ-
նից:

Այդպիսի մի անվճարականութեան մէջ օրորվում
էր, տարուբերվում էր Վարդանը: Նա դեռ յոյս
ունէր, որ կը գտնի Լալային: Եւ այդ քահանայի
մի խօսքիցն էր կախված նրա բախտը և ցմահ ան-
բախտութիւնը: Արդեօք ունէր այնքան ուժ և
այնքան սրտի զօրութիւն, որ կարողանար դիմա-
նալ քահանայի բոժաբեր խօսքին: Զարհուրելի
նախազգացումներ տիրել էին նրա հոգին և նա
ոչինչ հարցնել չը կարողացաւ, թէ և շատ ցանկա-
նում էր հարցնել:

Մէկը-Մանսուրին յայտնի չէր Վարդանի հոգե-
կան յարաբերութիւնները Լալայի հետ: Նա մինչև
անգամ ծանօթ չէր ծերունի խաչօրի ընտանիքի
հետ: Բայց նկատելով իր բարեկամի անհանգստու-
թիւնը, հարցրեց.

— Դու ունէիր մի բան խօսելու տէր հօր հետ,
զուցէ ես...

— Այ, քեզանից ծածուկ ոչինչ չունեմ, ստաց
Վարդանը և դարձաւ դէպի քահանան.

— Տէր հայր, զու յանձնեցիր Գոլֆանէս հայր
սուրբին քո ծուլի ցուցակը: Ինձ նոյնպէս հե-
տաքրքրի է դիտենալ, թէ Օ... գիւղից քանի ըն-
տանիքներ կան զաղթականների մէջ և որտեղ են
ընտկում նրանք:

— Օրհնած, իմ ծուլից ովքեր են մնացել, որ
նրանց համար ցուցակ կազմէի, պատասխանեց
քահանան այնպիսի մի եղանակով, կարծես հաւե-
րի վրա էր խօսում: Նա մատնեց իր կարող եմ
համբարել ինչ որ մնացել է, կամ օրտեղ թափա-
ռում են այժմ:
Վարդանը ամբողջ մարմնով զոգաց:

և ի Գրգարտան մեծ քանակութեամբ տեղա-
ցող ձիւնը բազմաթիւ ոչխարաց և ուրիշ ա-
նասնոց կորստեան պատճառ եղած է: Թէ
քաղաքին մէջ և թէ՛ դուրսը շատ մարդիկ
անօթութենէ մեռան: Քրիստոնեայք և խա-
լաք անցեալ օրերս իրենց դաւանները կը
ծախէին, որպէս զի ապրուստի համար քանի
մը դրոշ ձեռք բերին, և ուրիշներ ալ իրենց
գաւառները մզկիթներու և տուններու դրանց
տաճեց և կը թողուէն: Անգղիական հիւպատոս
Պ. Թրօթթըր հազարապետը կը հեռագրէ
Տիարաքէ քրիստոնէի: «Քաղաքին մէջ շատ հազար
մարդ բոլորովին թշուառ են. անօթութենէ
մեռնողներ շատ են. մեծ պէտք կայ դրամի:
Եւ շարքին երկու անգամ ապուր կը բաշ-
խմ երկու հազար Քրդաց, Արաբաց, Քաղ-
վեացւոց, Ասորաց և Յունաց, որոց ամեն
այ անօթութենէ մեռնելու վիճակին մէջ են,
և կը յուսամ թէ կարող պիտի լինիմ շարու-
նակել այս գործը մինչև յունիս ամիսն, յոր-
ժամ թերեւ թշուառութիւնը նուազի: 1200
անձանց լաւ ապուր կրնամ բաշխել ընդ ա-
մեն երեք անգլիական ոսկի ծախքով: Ան-
տիպայ պատրիարք Նիկիթիոսէն Քանթըր-
պէրի Արքեպիսկոպոսին ուղղեալ հեռագիր
մը կըսէ: «Սարսափելի թշուառութիւն կը
տիրէ ի Միջագետս: Շատ մարդ կը մեռնի ա-
նօթութենէ: Ձեր օգնութիւնը կը հայցեմ:»
—Մուսուլի եպիսկոպոսն ալ կը հեռագրէ առ
Սրբ ձէնրի Լէյրը: «Ծիրող մեծ սովուն
պատճառաւ քաղաքին մէջ և շրջակայ գեղերը
ժողովրդեան եղանակաւ եղած թշուառու-
թիւնը նկարագրել անհնար է: Ժողովուրդը
սատկած անասուններ կուտէ, որով բազում
հիւանդութիւնը կը ծագին: Շատեր ալ կը
մեռնին: Անոց և մահուան միջև տատա-
նող այս թշուառներուն համար օգնութիւն
ձեռք բերելից կը հայցեմ:» Կարնոյ Սմե-
րիկեան Միսիօնար Պ. Փարմի կը հեռագրէ
առ տիկին Սթրանկօթը: «Անկերներէս մին
Իվէրէթ հարիւրապետին հետ Բառնու
դաշտը գնաց. ասոնք ձանրան գարի գնեցին:
Կը յուսամք որ այս դրամն ուրիշ օգնու-
թեանց յառաջարկն է, որովհետեւ թշուա-
ռաց զոնէ մէկ մասին օգնելու և յառաջիկայ
տարուան ապրուստի միջոց հայթայթելու
համար հազարաւոր ոսկիներու պէտք կայ:
Ամենքս ալ ձեզ կը նայեմք: Կաղաքի մը
ժամանակին օգնութիւն զրկուի մեզ որովհե-
տե Բառնու և շրջակայից ժողովուրդն եր-
կար ժամանակ այս վիճակին մէջ չեն կրնար
ապրիլ, նոքա բացարձակապէս զուրկ են հա-
ցէ:» Անգղիական հիւպատոս Քլէյթըն հա-
րիւրապետը կը հեռագրէ Վանին: «Մեծ
շնորհակալութիւն ձեր զրկած դրամին հա-
մար. բայց այդ դրամով քիչ գործ պիտի կը-
նամք տեսնել: Փոխադրութիւնն աւելի զը-
ժուար է այժմ, ըստ որում խեղճ ժողովուրդն
իրենց բոլոր էջերը մորթելով կերած են:»
«Ահա այս և նմանօրինակ հեռագրեր, որը
սովալ գաւառներէն առնուած էին, Միթին-
կին մէջ կը ցրուէին:
«Յունի. ամիսը Լոնտայի մէջ մասնախումբ
մը կազմուած էր հասարակութենէն հան-
դանակութիւն հաւաքելով լրագրաց միջոցաւ
հրատարակելու, և սովալ գաւառները զրկե-
լու համար: Աղքատութեան տէր անձներէ, որը
մեծ մասամբ Հայագիւն են, բաղկացեալ մաս-
նախումբ մ'ալ Մանչեսթըրի մէջ կազմուած
էր. բայց օգնութիւն զրկելու գործին աւելի
կատարեալ կազմաւորութիւն մ'ապահովելու
համար, Լոնտայի և Մանչեսթըրի երկու
յանձնախումբը հաւանեցան միմեան յուսարով
որ իրենց գործակցութեամբ աւելի արդիւնք
զոյտայ: Կը կարծուէր որ ջիւր համարու-
թիւն պիտի զգացուի այս թշուառ ժողովու-
րոց համար, որը սովորաբար յոյժ աղքատ լի-
նելով, բնութեան տրոց ապարդիւն եղնելուն
վրայ անօթութենէ մեռնելու վիճակին հա-
սած էին: Ցախաւին երկար ամիսներ կան մի-
ջև հիւանդ ժամանակն, և դրամի անհրաժեշտ

պէտք կայ հազարաւոր հոգիներ որչ պահ-
լու համար մինչև այն ժամանակ: Գործողու-
թեան առատ միջոցներ կան տարածելու հա-
մար այն օգնութիւնները, զորս կը յուսա-
ցուէր որ զթափար հասարակութիւնը կա-
րող պիտի ընէր մասնախումբն այդ գաւառ-
ները զրկելու: Լորտ Սալիսպըրի և իւր յա-
ջորդը (Լորտ Կրանֆիլդ) յատուկ արտօնութիւն
տուած են Վեհ. Փառուհւոյն հիւպատոսաց
օգնել այդ գործին, և այս պարոնայք, իրենց
պաշտօնական դիրքերէն ամեն օրուս քաղե-
լով մարդկութեան դատին մէջ աղքատապէս
կ'աշխատին օժանդակութեամբ Նյուսթ Քրիս-
տոնեայ և Հրէայ հասարակութեանց զխա-
ւոր անդամոց: Արդէն 700 անգլիական ոսկի
զրկուեցաւ Տիարաքէ քրիստոնէի, 300 Անգլ. ոսկի Կա-
րին և Վան, 600 ոսկի Մուսուլ, 100 Հայէպ,
և Մանչեսթըրի յանձնախումբն ալ 1200 ոս-
կի զրկած է Հայաստան: Հայէպի և Այնթա-
պի համար Լորտ Քլէյնհամ առանձին հան-
գանակութիւն կը հաւաքէ:
«Քաղաքապետ Լորտը, Միթինկը բանալով,
յայտնեց թէ մեծ հաճութեամբ կուզէր օգ-
նել տիկին Սթրանկօթի ձեռնարկած մար-
դախրական գործին, և ըսաւ թէ սովալ
գաւառներէն առ ինքն ուղղեալ տեղեկու-
թեանց նայելով, սովուն սատակութիւնն ու
ընդարձակութիւնն, ինչպէս նաև ժողովրդեան
թշուառութիւնն յոյժ մեծ են: Այդ գաւառը
ոչ միայն Երիտասարդան առատաբերտ հասա-
րակութեան, այլ և բոլոր աշխարհի համա-
կրութեան ու օգնութեան իրաւունք ունին:
Քանձապետ Պ. Ալֆրէտ Զեմբըս հետե-
ւեալ նամակը կարգաց, զոր Քրդաբարանի
անդամ Պ. ձէյմս Պրայս Պ. Կրտսեմէն ըն-
դունած էր:
«Ես ի նկատ առի Հայկական մասնախումբին
այն փափաքը թէ չորեքշաբթի օրը Քաղա-
քապետական պաշտօնատան մէջ գումարուելիք
Միթինկին ներկայ գտնուիմ. բայց արդի գոր-
ծերս անտեսելու և նոր նախարարութեան մը
համար պէտք եղած այլ և այլ կարգադրու-
թիւնները Վեհ. Փառուհւոյն ներկայելու
պարտականութիւնն ամեն տեսակետով այն
ատիճան խիտ է, որ չեմ կրնար երկու կամ
երեք ժամ դադարեցնել զայն՝ մինչև իսկ սար-
սափելի թշուառութեան մ'օգնելու սըր-
բազան դատը փաստարանելու նպատակաւ:
Հետեւաբար, չեմ կրնար մարմնապէս ներկայ
գտնուիլ ձեզ հետ. բայց գործին ստիպողա-
կանութիւնը կը ձանձնէ, և անկեղծապէս կը
յուսամ որ ամենէն առաջ Լոնտայի մեծ և
բարեւել հասարակութիւնն, և ապա աւելի
բազմաթիւ ժողովուրդ մը՝ առատաբերտ
պիտի պատասխանեն ձեր հրաւերին: Այդ
բանն հաւատարմապէս համաձայն պիտի լինի
ձեմարիտ բարեգործութեան պարտականու-
թեանց, ինչպէս նաև Անգլիոյ բարի համ-
բաւոյն յԱրեւել: Հաճեցէք իմ անունն արձա-
նագրել 50 Անգլ. ոսկւոյ նպատակ մը հա-
մար:»
(Կը շարունակվի)

քանի մի օրից յետոյ բուրգերը ներկայանում
են, հայերը մերժում են բաւականաց-
նել նրանց հրէշաւոր պահանջը: Այն ժա-
մանակ քուրդերը յարձակվում են հայերի վրա
և կամենում են բռնի պահանջել նրանցից
զիւղի ամենագեղեցիկ աղջիկներին: Բայց
հայերը զինուորվում են, սկսում են պաշտ-
պանել իրանց անձը և կարողանում են յար-
ձակող քուրդերի մեծ մասին սպանել: Քուր-
դերի մի փոքր մասը կարողանում է փախչել
և գնում են փաշային զանգառով, որի հը-
րամանով հայ զիւղացիները ապստամբ և լը-
րովաբար համարվելով, բանտարկվում են:
Բայց Սրիմեսը անգլիական և ուսաց հիւ-
պատոսի աջակցութեամբ կարողանում է բան-
տից ազատել տալ կալանաւորված հայերին:
Նիթէ հայերը, ասում է թղթակցը, միշտ
անձնապաշտպանութեան դիմէին, վաղուց է
արդէն, քուրդերի կամայականութիւնը և
բարբարոսութիւնը կը զսպէին:
Մուշից մեզ հաղորդում են որ այդտեղ
սոված հայերը և թիւրքերը միմեանով կուտ-
րեցին հացի պետական ամբարները և քան-
դեցին մի մզկիթ: Նրբ կառավարութիւնը
ուզեց բանտարկել հայերին, մահմետականե-
րը յայտնեցին, որ չեն թոյլ տալ որ հայե-
րին ձեռք տան: Հայերը մեր եղբայրներն
են, աղաղակում էին մահմետականները, մենք
ամենքս նեղացած տանջվում ենք կառավա-
րութեան ձեռքից:»
Նրբ կառավարութիւնը ուզեց քննութիւն
անել գործի մասին, մահմետականները բա-
ցարձակապէս յայտնեցին թէ իրանք են կուտ-
րել ամբարները և ոչ թէ հայերը, թէ ի-
րանք էլ քանդեցին իրանց մզկիթը:
ԴԵՍՊԱՆՆԵՐԻ ԱԶԻԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ
Լօնդոնից հեռագրում են Հաւաստի ընկե-
րութեանը հետեւեալը:
Հէնց որ անգլիական զեսպան պ. Գոշեն և
Ֆրանսիական զեսպանի փոխանորդ պ. Տիւս
կը սկսեն վարել իրանց նոր պաշտօնները, բո-
լոր զեսպանները կը կազմեն և կը ներկայաց-
նեն Բ. Կրանը իրանց աղաքարարութիւնը:
Պետութիւնները զեսպանները Կ. Պոլսի մէջ
իրանք կը գրեն այդ աղաքարարութիւնը, որի
բնագիրը հեռագրով կը հաղորդվի հետաքը-
քոված պետութիւններին իւրաքանչիւրին:
Նրբ իրանց կառավարութիւններին հաւանու-
թիւն կը ստանան, զեսպանները կը ստորագ-
րեն այդ դիմումները: Կարելի է հաստատա-
սանել, որ պետութիւնները կը համաձայնեն
աղաքարարութեան բնագրին վերաբերութեամբ:
Լորդ Գրեյվիլի կողմից պետութիւններին ու-
ղարկած շրջաբերականը պարունակում էր իր
մէջ ոչ թէ միայն Բ. Կրանը մի աղաքարարու-
թեամբ դիմելու առաջարկութիւնը, այլ և
այն պատճառների նկարագրութիւնը, որոնք
այդ քայլը անհրաժեշտ են դարձնում: Կա-
ռավարութիւնները, հաւանութիւն տալով
լորդ Գրեյվիլի շրջաբերականին, նոյն իսկ այդ
հաւանութեամբ նրանք համաձայնեցին Բ.
Կրանը առաջարկվելի աղաքարարութեան բո-
վանդակութեան վերաբերութեամբ: Պետու-
թիւնները մէջ եղած ուղղակի յարաբերու-
թիւնները հաստատեցին այդ համաձայնու-
թիւնը: Կեպանների աղաքարարութիւնը Բ.
Կրան ուղարկութիւնը կը գործնի հետեւեալ
երեք հարցերի վրա. Չերնօգորիայի, Յունաս-
տանի սահմանների և Հայաստանի մէջ մեռ-
ցնելի վերանորոգութիւնները: Չերնօգորիայի
հարցի վերաբերութեամբ աղաքարարութիւնը
պաշտօնապէս կը բացատրի, որ թիւրքաց կա-
ռավարութիւնը կանոնաւոր կերպով չը յան-
ձնեց Չերնօգորիային այն երկիրները, որոնց
այդ իշխանութիւնը Կ. Պոլսի մէջ նորերում
ստորագրած պրոտոկոլի համեմատ պէտք է
ստանար, և կը հրաւիրի Բ. Կրանը բացատ-
րել, թէ նա ինչ միջոցներ է գործադրելու,
որպէս զի կարողանայ վերջ ընել գործերի
այնպիսի դրութեանը, որի ժամանակ ամեն
բազմ թշուառական գործողութիւններ կարող
են սկսվել Չերնօգորիայի գոթերի և ալբան-
ցիների մէջ: Յունաստանի խնդրի մասին աղ-
աքարարութիւնը կառավարելու Բ. Կրանը, որ
նա բաւականացուցիչ պատասխան չը տուեց
պետութիւններին պահանջին խոստանալ ա-
պահովութիւն այն մասնաթողովքի, որի վրա
պարտականութիւն է դրված ուղղել յունա-
կան սահմանները և ելձէ Բ. Կրանը անբա-

ւականացուցիչ պատասխան կը տալ, Բերլի-
նում մի կօնֆերենցիա կը հաւաքվի, որ կու-
րոշի սահմանական գծերը և միջոցներ կը
գտնի իր վիճիւններ իրազործելու համար: Ինչ
կը վերաբերի երրորդ կէտին՝ Հայաստանի մէջ
մայնելի վերանորոգութիւններին, աղաքա-
րութիւնը մատուցողը կը լինի երկրի անբա-
րօրար դրութեան վրա, կը ցոյց տալ հայ
աղաքարարութեան աղքատութիւնը և հայե-
րի անապահովութիւնը քիւրդերի յարձա-
կութեան և վարչութեան անարդարութե-
նից: Վերջապէս աղաքարարութիւնը կը պա-
հանջի Բ. Կրանից անապահով հաղորդել, թէ
ինչ միջոցներ է գործադրել Հայաստանի մէջ
գործերի այդպիսի դրութիւնը բարեկաւելու
համար:
ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ
«Մասիս» լրագրի մէջ կարդում ենք հետե-
ւեալը. «Ինչպէս արդէն ծանուցինք, մայրաքաղա-
քիս առժամանակեղ անգլիական զեսպան պ. Կո-
շեն պատերազմական նաւով մը Կարդանի Նե-
ղոցէն անցնելով Կ. Պոլսի պիտի գայ: Այս ա-
ռաջին անգամն է, որ Արեւելից կողմն այսպիսի
զէպք մը տեղի կունենայ: Մայրաքաղաքի թուրք
լրագիրը այս լուրերը ծանուցին առանց մեծ կա-
րեւորութիւն տալու: Կարելի է որ այս նորու-
թեամբ անգլիական նոր նախարարութիւնն ուզած
է արեւելեան ժողովրդից երեւակայութեան վրայ
ազդեցութիւն մը յառաջ բերել: Կը մնայ տեսնել
թէ այս զէպքն օրինակ մը չը պիտի լինի և ի
հարկին միւս տէրութիւնք ալ նախաձեռնելու իրենց
զեպանները նոյն եղանակաւ չը պիտի զրկեն
թիւրքաց մայրաքաղաքը:
«Մասիս» հաղորդում է. «Այս առաւօտ վա-
նէն հասած առժամահաւատ հեռագիր մը խրի-
ման Սրբազանին առաջնորդ ընտրվել կը ծա-
նուցանէ:»
«Մասիս» մէջ կարդում ենք հետեւեալ լուրը.
«Սովալից Հայկական յանձնախումբն այս առաւօտ
շնորհակալութեամբ կը ծանուցանէ մեզ թէ Հեռ-
մի կրօնական ժողովոյ նախագահ կարդանով Սի-
մէն ի նպատ սովալից հինգ հազար Քր. ի Կա-
րին և ի Մարտին յոյժ և այս գումարին մատա-
կարարութիւնն Հայկական մասնախումբին ձեռն-
հասութեանը յանձնարարած է:
«Մասիս» հաղորդում է. «Ս. Պատրիարք հայրը
շարքի օրը վանայ գաւառական ժողովին եկած
հեռագրէն իմանալով թէ Ամեն. Խորհման Սրբա-
զան գաւառ. ժողովոյ գաղտնի քուէքով և միա-
ձայն հաւանութեամբ վանայ առաջնորդ ընտրվել
է, փութաց անմիջապէս հաստատել այն ընտրու-
թիւնն և շնորհաւորել Նորին Սրբազնութիւնը:
«Մասիս» հաղորդում է հետեւեալ լուրը. «Սո-
վալից կենդրոնական յանձնախումբը շնորհակալու-
թեամբ կը ծանուցանէ մեզ թէ Հայկական կա-
ռավարութեան (և ոչ թէ Հայկաց Գեորգ թա-
գաւորին) զրկած 5000 Քրդներ, և Հայկական
Կարմիր խաչի ընկերութեան զրկած 2500 Քրդներ
նպատակ իրեն յանձնվել է:
«Նոյն լրագիրը հաղորդում է. «Ուրբաթ
առուր Գուրիէ Կ. Պոլսին մէջ հետեւեալ հա-
տուածը կը կարգաւոր, որ հանդիւրէ կը թուի
մեզ. «Կը հաւատեն մեզ թէ Հայ հասարա-
կութենէն քանի մը մեծ մարդիկ, այնպիսի շար-
ժառիթներէ զրդեալ, որոց վրայ չեմ ուզեք խո-
սիլ, Հայոց Պատրիարքն իւր պաշտօնէն հրաժա-
րեցնելու կ'աշխատին: Եթէ մեր տեղեկութիւնները
ճիշդ են, այս մեծ անձանց յառաջ առաքած նպա-
տակը գէշ աչքով չը տեսնուի եղբւր բարձր տեղե-
րէ: Ներսէս Սրբազանին դէմ եղած ամբաստա-
նութիւնը սա է թէ ինք իւր Կոստն մեծագործ
մասին բազմաթիւ գործերու ձգտում մ'ունի ե-
ղբւր, և կուզէ եղբւր այդ մեծ մարդոց բարեպա-
հակութիւնէն ազատ մնալ, որը թէն իրենց աղ-
գին գործերուն մէջ որ և է պաշտօն չունին, այ-
սու ամենայնիւ դադարի ազդեցութիւն մի գործ
կը զնեն, և մեծ վարկ ունին անոնց թով որոցմէ
կախում ունի Հայ հասարակութեան ապահովու-
թիւնն ու բարեկեցութիւնը:»
«ՄԵՍԱԿ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԵՑ
Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԻ, 28 մայիսի. Իսկոյն թըն-
դանութիւնների և հրացատների միջոցներ տե-
ղեկացրեց Պետերբուրգին ի Տէր հանդուցեալ
Ապստոլ հաւանութեան թաղումը, որ ցերեմո-
նիայի համաձայն կատարվեցաւ Պետրոպոլ-
կան մայր եկեղեցում:
Ա. ՊԵՏԵՐ, 28 մայիսի. Փրանսիական էսկա-
դրան երէկ Պիլէից զէպի Բէգիլեան ծոցը
լողաց, ուր կը հետեւեն շուտով իտալական և
անգլիական նաւերը:
Կ. ՊՈԼԵՍ, 28 մայիսի. Կարգի-փաշան ա-
ռաջին միսիստը է նշանակված. Արեւիկա-փա-
շա նշանակված է արտաքին գործերի միսիս-
տըր վեցերի կուռմով:
Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԻ, 29 մայիսի. Երէկ Ն. Կ.
Բ. Մեծ Իշխան Միքայէլ Նիկողայեւի ճանա-
պարհ ընկաւ զէպի Թիմիշլիւ:
Խմբագիր—հրատարակող ԳԻՒԳՈՐ ԱՐԴՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՓՆՏՈՒՄ ԵՆ ՄԻ ՀԱՇՈՒՊԱՆ, որ լաւ խմայ ԹՈՒՍՅԱՆ և ՏԵՂԱՎԱՆ լեզուները, Սայի-Օղլի ծխախոտի ԳՈՐԾԱՐԱՆԻ համար: Բերուածական փողոց, ձեւարկածով տուն:

3—3

ՄԱՐԻԱՄԵՆ-ՅԱՎՆԱՆԵՆ օրորդաց ուսմանարանում ԲՆԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ լինելու են ՀԵՏԵՐԵԱՆ ԿԱՐԳՈՎ:

Մայիսի 19 և 20 կրօն և Սրբազան պատմութիւն:

« 22 և 23 Հայոց լեզու:

« 26 և 27 ռուսաց լեզու:

« 28 Թուրքանու թիւն

« 30 և 31 Աշխարհագրութիւն, պատմութիւն և բնական գիտութիւններ:

5—5

ՔԱՐԱՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ պատկերազարդ հանդիսներ կայանալ Երկրորդ տետրեր կը հըրատարկուի յառաջիկայ յուլիս ամսոյ սկզբում և կը բովանդակէ քար, մէջ, ի միջի այլոց նաեւ Հ. Մարգարիտ Ս. վարդապետի Օրմանեան, Գարրիէլ արքեպիսկոպոսի Այվազեան, Միքայէլ Միւսսարեանից և այլոց պատկերներ: Բաժանորդներն շարունակում է: Տարեկան գինն է 2 ռուբլի արծ. կանխիկ վճարել:

Հրատարակիչ Ջարմար Մսերեանց

3—10

Համեմատեցէք անգլիական խանութի թէյի գինը 1 ռ. 10 կ., 1 ռ. 20 կ., 1 ռ. 40 կ., 1 ռ. 60 կ., 1 ռ. 80 կ. Ֆրանսի համար այն թէյերի հետ, որոնք ուրիշ խանութներում 300/0-ով թանկ են ծախվում և այդ խանութի ֆուտուր 2 ռուբլիանոց թէյը, ուրիշ անգ 4 ռ. ծախվող թէյի հետ:

3—100

ՀԱՂՈՒՍՏԵՐ երկխաների 4 ռ., աղամարդկերանց 9—20 ռ., ամրոց հաղուսար, պիշակ 5 ռ., ՆՈՐՏԵՂ և ՆՈՐՎԱՆՈՒՄ. ԱՆԳԼԱՆԻԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ: Բաժանվել, պարտաւրի, որիկ, զրապ, փոստի թուղթ, թաւիշ կարասիների և կաշեքերի համար, կարեկոր և այլն 25% ուրիշ տոկոսով է ծախվում: ԱՆԳԼԱՆԻԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ համեմատաբար, կոնֆետներ հազել գէլ, պանիր, մազնեղիտ, ամանների, կարթուրան փոշի, սապոն, պարսկական փոշի և այլն: Այս բոլորը և ուրիշ շատ ապրանքներ կարելի է գտնել ԱՄԵՐԻԿԱՆ ԳԵՆԵՐԱՆ ԱՆԳԼԱՆԻԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ:

3—20

Յունիսի 1-ին, կիրակի օրը լինելու է Մարիամեան Յոնանեան օրորդաց դպրոցի տարեգարծը (ակո):

Ժամը 10-ին կը սկսվի օ. պատարազը Կուսանաց եկեղեցում, որից յետոյ կը կատարուի հանդուցեալ տիկին Յոնանեանցի և նորահանդուցեալ գաւակաց հոգեհայրերի: Եկեղեցական ուխտը հանդիսով կիջնու սուսմարան, որի գահինում կը կարդացուի ուսումնարանի ուսումնական և տնտեսական հաշիւը, որին կը հետեւի պարգևաբաշխութիւն:

Վիճակաւորից զոյցած արդիւնքը գործարկելու է յօգուտ ուսումնարանի յառաջադէմ չքաւոր աշակերտներին: Ի զիմաց խորհրդարանի տեսուչ-Յ. Զիւղանեանց

ԵՂ. Ս. ԵՒ Ա. ԴԱՐԹԵԱՆՆԵՐԻ ՏՊԱՐԱՆՈՒՄ, որ գտնվում է Սապոր-նայա փողոցում, պ. ԿԱՐԱՆԻՍԿՈՒ տանը, № 23 ընդունվում են ամեն տնակ ՀԱՅԵՐԵՆ ԳՐԹԵՐԻ տպագրութիւն աւելի էժան գեներով, քան թէ ՈՒՐԻՇ ՏՊԱՐԱՆՆԵՐՈՒՄ:

2—2 (2)

ՄԱՍՆԱՒՈՐ ՄԵՐ ԱՃՈՒՐԻ

Յայտնվում է Քիշիւսի հասարակութեանը, որ մեծ քանակութեամբ արաստահանեան գիններ են ստացվել Դեպքի, Երեւելի և ուրիշների զինու պահեստներից, Պոպով և Նարիտների օղի, Ֆրանսիական լիկորներ և ուտեստներ: Մտադրութիւն կար այդ ապրանքների առևտուր սկսել Քիշիւսի մէջ, բայց որովհետեւ ձանապարհների կապված լինելու պատճառով այդ ապրանքները ուշացան նշանակվում է մասնաւոր անուրջ Թամազի քարվանսարայի գարիէլյում, մայիսի 21-ից մինչև յունիսի 5-ը ամենայն օր առևտուր 9 ժամից մինչև երեկոյան 7 ժամը, անուրի ժամանակ փոքր քանակութեամբ էլ կը ծախվի, այսինքն 10 մինչև 20 շիշ: Յոյս ունեւ, որ այդպիսի հաղուս-գիւտ գէպըը անուշադիւր չի մնայ:

2—2

ԱՆԳԼԱՆԻԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ ծախվում են օլեոգրաֆիական պատկերներ 20% զեղումով: Գերաբերենք 6—10 ռ., խողանակներ պատկերով և են Ֆիլիք մէջ առանձնապէս անգլիական խանութի համար, ամենալաւածիկներ, արկիւրով 4 ռ., Ենֆիլի քանակներ 3—20 ռ. գիւծիւր, բրտանական մետաղի թէյամաններ 30 կ.—3 ռ., ցիտրատ-մազնեղիտ, Թիւրքական շերէթ և ծաւալը յաղցնող նիւթ 70 կ., ամենալաւ պօրու զէյն և խրիս 1 ռ. 40 կ. շիշը, շամպայն 3 ռ. շիշը:

2—20

ԲԺՇԿԱՆՈՅ

ՀԻՒԱՆԳՆԵՐԻ ԸՆԳՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՊՈՏԵԱՆ ԳԻՅ ՄԵՆՁԵՐ 1 ՃԱՄԸ:

Երկուշաբթի. Գալթօն սկի կանանց հիւանդ. Գօրալեվիչ ներքին հ., Բօտինեանց կանանց և երկխաների հ., Քիւլա-բեանց խրուրդիական և աշքերի հ., Ետալմօրսկի վներական և կաշու հ., Բաբայան ջրային և հոգեկան հ.:

Երեքշաբթի. Միսկեվիչ խրուրդիական հ., Վզօրով վներական և բողազի հ., Բէյլի աշքի հ., Բախուտով մանկաբաժանի, կանանց և երկխաների հ., Կրասնօգլեւադով, Լիսիցեվիչ և Վերմիշևիչ ներքին հ.:

Չորեքշաբթի. Լիսիցեվիչ Բուդովով ներքին հ., Ետալմօրսկի կներական և կաշու հ., Աստուածատուրով կանանց հիւանդութիւններ:

Հինգշաբթի. Վզօրով վներական և բողազի հ., Բօտինեանց կանանց և երկխաների հ., Լիսիցեվիչ և Վերմիշևիչ ներքին հ., Քիւլաբեանց սիֆիլիսի և սեռական օրգանների հ.:

Ուրբաթ. Գալթօն սկի կանանց հ., Միսկեվիչ խրուրդիական հ., Կրասնօգլեւադով և Լիսիցեվիչ ներքին հ., Բախուտով մանկաբաժանի, կանանց և երկխաների հ., Ետալմօրսկի և Աստուածատուրով վներական և կաշու հ., Բաբայան ջրային և ներքին հ.:

Երաբթի. Լիսիցեվիչ և Վերմիշևիչ ներքին հ., Բաբով կուրծքի հ., Ետալմօրսկի վներական և կաշու հ.:

Բացի այդ բժիշկ Վզօրով բժշկանոցի մէջ ընդունում է անվարձ աղքատ հիւանդներին ամենայն օր երեկոյան 4—6 ժամը:

Բժիշկ Բաբայան չորեքշաբթի օրերը առևտուր 9-ից մինչև 11 ժամը ընդունում է իր տանը բժշկանոցի հիւանդներին էլեկտրական բժշկութեան և ներքին հ. համար: Բախուտով գտնվում է Սերգիևկայա փողոցի վրա, Բոյանդուրովի տանը:

Ստամբուլից Օրբիսիտ աղքատ հիւանդներին բժշկանոցի տոմարով ընդունում է ամենայն օր, ամենայն ժամանակ:

Բացի կիրակի օրերից ամենայն օր առևտուր 9—11 ժամը բժշկանոցում լինում է մանկաբաժնի կին հիւանդ կանանց ընդունելու համար:

Բժշկանոցի ղեկավար Լիսիցեվիչ:

Դուրս եկաւ մամուլի տակից և ծախվում է «Երեւոյան» և պ. Չ. Գրիգորեանցի «Կովտան» գրաւածաւանդներում և Թարգմանչի մօտ ներսիսան դպրոցում համաշխարհական օրերգով Վիլիամ Եկիպարի:

Յակը

Վենետիկի մար, օրերգութիւն հինգ արարուածով Եկիպարի կնոսագրութեամբ: III Թարգ. Ստեփանոսի Սուլանեանց. գինն է 60 կօպ:

4—5

«ԵՂՈՐ ԿԱՍՈՒՄՈՐ» ԵՒ ԸՆԿ.

Առևտրական տունը օրանով յայտնում է, որ քնուկներին մինչև նոր փոփոխութիւնը վը-ճարում է:

1) Հատարակ և պայմանաւոր ընթացող հաշիւներին 4 1/2%

մինչև պահանջելը 4 1/2%

2) Ժամանակաւոր մուտքերին. 6 ամս 6%

9 ամսով 6 1/2%

1 տարով 7 1/2%

1 1/2 տարով 8%

2 տարով և աւելի 8 1/2%

3) Մասնաւոր գնումներին առաջին կարգի պայմաններին 9%

Գուճակներ տալու ժամանակ վերջում է Մի ամսով ընթացքում 10%

« Հաբաթիկ 9%

ԱՌԻՏԻՍԿԱՆ տան ԳՐԱՍԵՆԱԿԸ գտնվում է Էիշ. ԹՈՒՄԵՆՈՎՆԵՐԻ տանը, Ալէքսանդրեան այգու զինաց և բաց է մուտքի ընդունելու և վերջում պարտքերի հանգանակ համար ՀԱՍԱԿԱՐ օրերը առևտուր 8—2 ժամը, իսկ ՏՈՒՆԵՐԻՆ առևտուր 8—10 ժամը:

3—3 (2)

Մամուլի տակից դուրս եկաւ դօկաթ Բօկի «Աստուան» առողջապահութեան գրքիկի հա-յերէն Թարգմանութիւնը: Գրքի պահեստը գտնվում է Զարարիա Գրիգորեանցի Կովտան Գրաւածաւանդում: Գինն է 35 կօպ:

ԾԱՌՎՈՒՄ Ե ՄԵԲԵԼ
ԹԻՖԼԻՍՈՒՄ, ՆԵՂՈՐ-
ՆԱՅԵՍ ՓՈՂՈՑՈՒՄ, ՏՈՒՆ
№ 21, ԳԼԻՒԹՈՒՄ:

2—2

Висель изъ печати и поступилъ въ продажу VI томъ „Сборника свѣдѣній о Кавказѣ“, изданія Кавказскаго Статистическаго Комитета, содержащій въ себѣ:

«Тифлисъ по однопднейной переписи 25-го марта 1876 г.»

всего 570 страницъ in 4, съ 19-ю приложениями, а именно:

- 1) 15 литографированныхъ раскрашенныхъ графическихъ таблицъ;
- 2) 2 вида Тифлиса: по Шардену (1671 г.) и Турнефору (1701 г.);
- 3) копія съ плана Тифлиса по паревичу Вахушту (1739 г.);
- 4) планъ современнаго Тифлиса.

Продажа производится въ книжныхъ магазинахъ: Беренштама, Кавказской книжной торговли и Центральной книжной торговли. Цѣна 4 руб. сер.; на пересылку прилагается за 5 фунт.

ПОСТУПИЛИ ВЪ ПРОДАЖУ СЛѢДУЮЩІЯ КНИГИ.

По вопросамъ о Воспитаніи дѣтей, научномъ обученіи, женскомъ трудѣ, бракѣ и объ отношеніи къ падшимъ женщинамъ, съ приложеніемъ о спиритизмѣ разборъ сочиненіе Г-жи Одуаръ, сотвореніе міра, что такое природа, рай и адъ по Сведенборгу, душа и тѣло, свобода воли, откуда въра въ бессмертіе души, сочиненіе Е. Фрибесъ, ц. 1 р. 50 к. съ пересыл.

Столярное Искусство съ 150-ю рисунками и многими чертежами. Сочиненіе А. Ленцинга, издан. 2-е, ц. 3 р. съ пересыл.

Славянская Воряба, историческій очеркъ возстанія балканскихъ славянъ, Черногорско-Турецко-Сербской Россійской войны и дипломатическихъ сношеній. Составилъ А. Фелькнеръ, ц. 1 р. съ пересыл.

Возрожденіе Организма, безсиліе и безплодіе, зависящія отъ преждевременнаго истощенія, опизма, трипера, сужеванія мочевого канала, страданій мужскихъ и женскихъ, леченіе венерическихъ болѣзней, ихъ радикальное излѣченіе предохранительныя противъ ихъ мѣры и возстановленіе способностей къ зачатію младенца, сочиненіе доктора медицины и акушерства, А. Штейнбахера, съ рисунками ц. 4 р. съ пересыл.

О дѣйствіяхъ Природы въ произведеніи рода человѣческаго, или о сремленіи одного пола къ другому о плодотвореніи зачатіи и зародженіи и сохраненіи младенцевъ, для произвѣденія на свѣтъ здоровыхъ дѣтей и для сохраненія собственныхъ силъ и здоровья съ показаніемъ безвредныхъ испытанныхъ средствъ къ укрѣпленію ослабѣвшихъ мужскихъ органовъ, перев. съ нѣм. доктора К. Иванова, издан. 3-й п. 1 р. 50 к. съ пересыл.

Объ Онанизмѣ и безсиліи, о средствахъ снова возстановить и укрѣпить здоровье, растроены онанизмомъ и безсиліемъ, сочиненіе доктора Тиссота, издан. 2-ое ц. 1 р. 50 к.

Преждевременное Истощеніе человѣка зависящее отъ болѣзней половыхъ органовъ и мочевого путей; у мужчинъ и женщинъ. Сочиненіе доктора медицины Жювана, издан. 3-е въ 5-ти частяхъ, ц. 4 р. съ пересыл.

О Безплодіи Мужчинъ и женщинъ и о средствѣ къ излеченію онаго, сочиненіе доктора Рихтера, ц. 1 р. 50 к. съ пересыл.

Изъ Нашего Гнѣздышка, картинки изъ дѣтской жизни содержащія въ себѣ 37 дѣтскихъ, разсказовъ ц. 50 к. съ пересыл.

О Параличѣ и Невраміи и другихъ нервныхъ болѣзняхъ и объ успѣшномъ леченіи ихъ, элевтричествомъ, сочиненіе Алтгауса, перев. профессора, М. Руднева, ц. 1 р. 50 к. съ пересыл.

Опредѣленіе жизни сочиненіе, профессора Клодъ Бернара, перев. Д. Коржа, ц. 50 к. съ пересыл.

О пищѣ какъ средствѣ предупрежденія болѣзней, сочиненіе Э. Вильсона, перев. доктора медицины Руднева, ц. 30 к. съ пересыл.

Распознаваніе Венерическихъ Болѣзней, у женщинъ и дѣтей, съ рисунками въ текстѣ, отдѣльнымъ атласомъ разкрашенныхъ рисунковъ снятыхъ съ натуры, составилъ докторъ медицины и профессоръ, В. Торновскій, ц. 4 р. 50 к. съ пересыл.

Руководство къ сохраненію здоровья и воспитанію человѣка, письма о душевномъ и тѣлесномъ воспитаніи и достиженіи возможно-счастливаго состоянія человѣка во всякомъ возрастѣ, полѣ и при всѣхъ обстоятельствахъ жизни необходимая книга для всякаго, въ особенности для родителей и воспитателей, составилъ докторъ медицины Доброславинъ ц. 3 р. съ пересыл.

Книга для молодыхъ людей обоего пола съ 29 рисунками половыхъ органовъ и ихъ болѣзней, составилъ докторъ Нелюбовъ ц. 1 р. 50 к. съ пересыл.

Бракъ и Везбрачіе во всѣхъ половыхъ и моральныхъ проявленіяхъ съ самыми любопытными историческими и медицинскими подробностями о взаимныхъ отношеніяхъ мужчинъ и женщинъ, начиная отъ бокой древности и до нашего времени, гигиѣна, физиологія и философія брака и безбрачія; въ 4 част. Сочиненіе Дебо, ц. 4 р. съ пересыл.

Истинное Сокровище для домохозяевъ, землевладѣльцевъ или упрощенное плодоводство садоводство, огородничество и цвѣтоводство. Составилъ Муравскій, со многими рисунками, планами и чертеж. 2 т. 2 р. съ пересыл.

Съ требованіями Гг. иногородные благоволятъ обращаться исключительно на имя Христофора Ивановича Петрова, по фонтанкѣ, близъ Англійскаго проспекта, домъ № 143. кв. № 16, С.-Петербурѣ.

1—1